DOI: 10.54503/1829-4324.2023.2-235

ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ, ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (2011-2021ԹԹ.-ԻՆ)

Գրիգոր Թաթուլի Մանուկյան

Հոդվածը ստացվել է՝ 01.10.23, ուղարկվել է գրախոսման՝ 02.11.23, երաշխավորվել է տպագրության՝ 07.12.23

Ներածություն: Շուկայական տնտեսության կառուցվածքի անբաժանելի մասերից է աշխատաշուկան, որը գործում է այլ շուկաների հետ միասին: Աշխատաշուկան ընդգրկում է հիմնականում բաշխման և փոխանակման հարաբերությունների համակարգը աշխատուժի վերարտադրության գործընթացում, թեև աշխատուժի արտադրության և օգտագործման որոշ ասպեկտներ նույնպես շուկայի կարգավորման ոլորտում են: Հետևաբար ներառում է ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական, իրավական և հոգեբանական հարաբերություններ:

Ուսումնասիրության նպատակն է վեր հանել ՀՀ աշխատաշուկայի միտումները և ներկայացնել դրա առանձնահատկությունները: Այդ նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները. ուսումնասիրել մշտական բնակչության, կենդանի ծնվածների և մահացություն կյանքի սպասվող տևողության դինամիկան, վերլուծել աշխատանքային ռեսուրսների կազմը և կառուցվածքը, ներկայացնել աշխատուժի և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության առանձնահատկությունները:

Աշխատաշուկայի փոփոխությունները պայմանավորված է ոչ այնքան գործազրկության մակարդակի թռիչքներով և տարածքային ճեղքերով, որքան զբաղվածության կառուցվածքի կտրուկ փոփոխություններով, ժամանակակից տեխնոլոգիաների մասնագետների պահանջարկի արագ աճով, մասնագիտական նոր պակասով և այլ գործոններով[1]:

Աշխատաշուկայի խնդիրների վերաբերյալ տեսական տեսակետները էվոլյուցիոն զարգացման երկար ճանապարհ են անցել, որոնք բնութագրվում են մեթոդաբանական մոտեցումների և էմպիրիկ ընդհանրացման գործիքների բազմազանությամբ և ճկունությամբ[2]:

Աշխատաշուկան շուկայական տնտեսության կարևորագույն տարրերից մեկն է: Ներկայիս պայմաններում աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության խորացումը պահանջում է ուսումնասիրել և վերլուծել աշխատաշուկայի հիմնական ցուցիչները: Աշխատաշուկայի «հիմնական»

---

[1] Маслова Е. В., Колесникова О.А., Околелых И. В. Современные трансформации рынка труда России: вызовы и необходимая реакция управления // Экономика труда. – 2022. – Том 9. – № 4. – С. 743–764. doi: 10.18334/et.9.4.114459

[2] Горина Е., ИССЛЕДОВАНИЕ РЫНКА ТРУДА: МЕЖДИСЦИПЛИНАРНЫЙ ПОДХОД, СОВРЕМЕННАЯ ЭКОНОМИКА: ПРОБЛЕМЫ, ТЕНДЕНЦИИ, ПЕРСПЕКТИВЫ, № 5, 2011 ГОДУДК 316.334.2+331. 5

ցուցիչների հավաքածուն ավելի մատչելի է դարձնում զբաղվածության նոր միտումների մոնիտորինգի իրականացումը, ամուր հիմք են ապահովում արդյունավետ զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի հետ կապված հիմնական խնդիրները գնահատումը և լուծումը[1]:

Մեթոդաբանություն: Ներկայացված հետազոտության համար հիմք են հանդիսացել և շրջանառություն մեջ են դրվել հայրենական և օտարերկրյա տնտեսագետների հրատարակած աշխատությունները, հոդվածները, գիտաժողովի նյութերը, վիճակագրական ժողովածուներ: Հետազոտության ընթացում կիրառվել են տվյալների հավաքագրման, համեմատական, ընդհանրացման վերլուծական մեթոդներ, որոնք թույլ են տվել բացահայտել աշխատաշուկայում տեղաշարժերը, կատարել համապատասխան եզրակացություններ:

Վերլուծություն: ՀՀ աշխատաշուկայի միտումների ուսումնասիրությամբ զբաղվել են հայ հետազոտողներ: Առանձին ուսումնասիրության առարկա է հանդիսացել աշխատաշուկայում առանձին մասնագետների պահանջարկի և յուրաքանչյուր մասնագիտության ներկայացվող պահանջների փոփոխությունը[2]: Մեկ այլ հետազոտող ուսումնասիրել է Հայաստանի աշխատաշուկայի վրա և ՏՀՏ ազդեցությունը, մասնավորապես վերլուծության միջոցով ներկայացրել է ՏՀՏ հնարավորությունները և սպառնալիքները ՀՀ աշխատաշուկայի համատեքստում[3]:

Աշխատաշուկայում իրավիճակը պայմանավորված է ժողովրդագրական և տնտեսական գործընթացներով, որոնք ազդում են առաջարկի և պահանջարկի կառուցվածքի վրա: Աշխատաշուկայում առաջարկողները և պահանջարկողները ազդում են որոշակի արդյունաբերության կամ ամբողջ տնտեսության զարգացման կամ լճացման վրա[4]:

Աշխատաշուկայում տեղի ունեցող գործընթացները անքակտելիորեն կապված են երկրի ժողովրդագրական իրավիճակի, տարբեր տարիքային և սեռային խմբերի դինամիկայի, ծնելիության և մահացության, ամուսնությունների և ամուսնալուծությունների թվի, ընտանիքների կազմի, ընտանիքում երեխաների միջին թվի և այլ ցուցանիշներ հետ: Բնակչության թիվը և դրա սեռային ու տարիքային կառուցվածքը որոշում են աշխատաշուկայում աշխատուժի առաջարկը:

ՀՀ աշխատանքային ռեսուրսների քանակական բնութագրերի որոշման սկզբնական հիմքը բնակչությունն է: Այդ նպատակով կազմվել է աղյուսակ 1-ը:

---

[1] Ключевых показателей рынка труда 9-го издания https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms_498941.pdf , Վերջին մուտք 13.02.2023

[2] Աշխատաշուկայի միտումները Հայաստանում, ՀՊՏՀ <<Ամբերդ>> Հետազոտական կենտրոն, https://asue.am/upload/files/amberd/Ashxatashuka-compressed.pdf. Վերջին մուտք 11.11.2023

[3] Арутюнян Г.А., Некоторые аспекты трансформации рынка труда в условиях проникновения Интернета (на примере Армении) Սոցիալ-տնտեսական զարգացման Արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2023, էջ 254-269

[4] Калинников М. Рынок труда: итоги 2017 и планы на 2018. – М.: Хэдхантер, 2018, с. 5:

Աղյուսակ 1

Մշտական բնակչության, կենդանի ծնվածների և մահացություն կյանքի սպասվող տևողության դինամիկան 2012-2021թթ-ին[1]

Տարի-ներ	Մշտական բնակչություն (տարեսկզբին), հազ	Աշխատու-նակ տարի-քից ցածր բնակչու-թյուն, հազ	Աշխատու-նակ տարի-քի բնակ-չություն, հազ	Աշխատու-նակ տարի-քից բարձր բնակչու-թյուն, հազ	Կենդանի ծնվածներ	Մահա-ցություն	Կյանքի սպաս-վող տևողու-թյունը հաշ-վարկված ծննդից, տարի
2011	-	-	-	-	43 340	27 963	74.0
2012	3 021.4	609.1	2 050.2	362.1	42 480	27 599	74.3
2013	3 026.9	609.8	2 051.5	365.6	41 790	27 196	74.8
2014	3 017.1	611.8	2 034.0	371.3	43 031	27 196	75.0
2015	3 010.6	616.8	2 015.1	378.7	41 763	27 878	75.0
2016	2 998.6	623.7	1 987.2	387.7	40 592	28 226	75.0
2017	2 986.1	628.8	1 962.9	394.4	37 700	27 157	75.4
2018	2 972.7	632.9	1 934.6	405.2	36 574	25 751	75.9
2019	2 965.3	635.7	1 910.4	419.2	36 041	26 186	76.5
2020	2 959.7	635.6	1 889.5	434.6	36 353	36 433	73.5
2021	2 963.3	635.5	1 881.8	446.0	36 623	34 388	72.4
2022	2 961.4	634.7	1868.3	458.4	-	-	-

ՀՀ մշտական բնակչությունը 2014-2022թթ.-ին, բացառությամբ 2021թ-ը, մշտապես ունեցել է նվազման միտում: 2014թ-ի հետ համեմատ 2022 թ-ին մշտական բնակչությունը նվազել է 55.7 հազ-ով: 2022թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ-ում բնակչությունը համարվում է ծերացող, քանի որ երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է կազմել է 12.9%, ինչը գերազանցել է 7%-ը: Մշտական բնակչության վրա իր ազդեցությունն է ունենում կենդանի ծնվածների և մահացությունների թվաքանակը: 2012-2020թթ-ին, բացառությամբ 2014թ-ը, կենդանի ծնվածների թվաքանակը ունեցել է նվազման միտում: 2021թ-ին մի փոքր աճելով կազմել է 36623, սակայն 2011թ-ի ցուցանիշը զիջում է 6717-ով: Այնուամենայնիվ կենդանի ծնվածների թվաքանակը, բացառությամբ 2020թ-ին, մշտապես գերազանցել է մահացության ցուցանիշը: Նման պայմանում ապահովվել է բնակչության բնական հավելաճը, որը 2021թ-ի ցուցանիշով էապես զիջում է 2011թ-ի ցուցանիշը: Բնակչության թվաքանակի վրա ազդող գործոններից է կյանքի սպասվող միջին տևողությունը: Վերջինս 2012-2019 թթ-ին հիմնականում աճել է 74-ից հասել է 76.5, սակայն համաճարակի և պատերազմի հետևանքով 2020-21թթ-ին նվազեց հասնելով 72.4, ինչը զիջում է 2012թ-ի մակարդակը[2]:

Պետությունը խթանելով բնակչության թվաքանակի բնական աճը և նպաստելով կյանքի տևողության ավելացմանը, բարելավվում է աշխատանքային նե-

[1] Աղյուսակը կազմվել է Հայաստանի ժողովրդագրական ժողովածու – 2022թ.-ի տվյալների հիման վրա

[2] Վերլուծության համար հիմք է հանդիսացել Հայաստանի ժողովրդագրական ժողովածու – 2022թ.-ի տվյալները

րուժի վերարտադրության հնարավորությունները, որը կարող է դիտվել որպես աշխատանքային ներուժի բավարար վերարտադրություն: Ընդհանուր առմամբ աշխատանքային ներուժի վերարտադրությունը երկրի տնտեսության մասշտաբով աճում է նաև զբաղվածության ազդեցության տակ:

Հաշվի առնենք այն, որ արտագաղթը մշտապես գերազանցել է ներգաղթին, այսինքն՝ միգրացիայի մնացորդը բացասական է եղել, բացառությամբ 2020թ-ը, չնայած այդ մնացորդը 2018թ-ից ունեցել է նվազման միտում[1]: Այնուամենայնիվ կարծում ենք, դրա վրա իր ազդեցությունն է ունեցել այլ ազգի ներգաղթողները:

Աշխատաշուկայի վերլուծության համար սովորաբար հաշվի է առնվել երեք հիմնական տարիքային խմբեր՝ աշխատունակ, նախա և աշխատունակ տարիքից բարձր տարիքի բնակչությունը: 2012-2019թթ-ին աշխատանքային տարիքից փոքր տարիքային խմբում նկատվում է տարեկան աճի միտում՝ բացարձակ գումարով միջին տարեկան աճը կազմել է 3.8 հազ, իսկ հարաբերական մեծությամբ 0.6%, 2020-2022թթ-ին ունեցել է նվազման միտում, որը 2012 թ-ի հետ համեմատ ավել է 25.6 հազ-ով կամ 4.2%:

Բնակչության մեծ մասը աշխատունակ տարիքի է, որին նպաստող գործոններից են բնակչության բնական հավելաճը, կյանքի սպասվող միջին տևողության ավելացմամբ: Աշխատունակ տարիքի բնակչությունը շարունակական նվազելով 2012-2022թթ-ին կազմել է 1868.3 հազ, որը 2012թ-ի հետ համեմատ փոքր է 181.9 հազ-ով, արդյունքում միջին տարեկան նվազումը կազմել է 18.2 հազ, իսկ հարաբերական մեծությամբ մոտ 0.9%:

Աշխատունակ տարիքից բարձր մարդկանց թվաքանակը մշտապես ունեցել է աճի միտում 2012-2022թթ-ին, այդ ժամանակահատվածում տարեկան միջին աճը բացարձակ գումարով կազմել է 9.3 հազ, իսկ հարաբերական մեծությամբ՝ 2.6%: Երբ կենսաթոշակառուների և մինչաշխատունակ տարիքի բնակչության թիվը գնալով իրար հավասարվում է, ապա այն բերում է նեղացած վերարտադրության: Նման միտում նկատվում է մեր երկրում:

2022թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության կառուցվածքում 0-15 տարեկան երեխաների տեսակարար կշիռը կազմել է 21.4%, որը գերազանցում է 2012թ-ի ցուցանիշը 1.3 տոկոսային կետով, աշխատունակ տարիքինը (01.01.12թ.-ից՝ աշխատունակ տարիքի բնակչության կազմում ներառված են 16-62)՝ 63.1%, որը զիջում է 2012թ-ի ցուցանիշը 4.7 տոկոսային կետով, որը զուգորդվել է 2013թ-ից այդ տարիքի բնակչության մշտական նվազմամբ, իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը՝ 15.5%, որը 2012թ-ի ցուցանիշը գերազանցում է 3.6 տոկոսային կետով, ինչը տեղի է ունեցել այդ տարիքի բնակչության թվի մշտական աճի պայմաններում:

ՀՀ ժողովրդագրության ոլորտի փոփոխությունները պայմանավորված են կյանքի այլ ոլորտների փոփոխությունների հետ, իսկ բնակչության բնական

[1] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու – 2022

վերարտադրության փոփոխականները սովորաբար կախված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, բնակչության նյութական բարեկեցությունից, բնակչության զբաղվածությունից, կրթական, սոցիալական և բժշկական ծառայությունների հասանելիության մակարդակից, որակից գնից և կյանքի այլ պայմաններից: ՀՀ տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացներով կարող են բացահայտվել պատճառահետևանքային կապ աշխատուժի առաջարկի և պահանջարկի, ինչպես նաև դրա և տնտեսության միջև:

Աշխատունակ բնակչության ինտենսիվ միգրացիոն արտահոսքն ի վիճակի չէ թուլացնել լարվածությունը ՀՀ աշխատաշուկայում: Այն փաստում է աշխատաշուկայում միգրացիայի դրական և բացասական դերը: Եթեարտագաղթի ազդեցությունը ՀՀ աշխատաշուկայի և ընդհանուր առմամբ տնտեսության վրա ունի դրական և բացասական, ապա անվերահսկելի ներքին միգրացիան բացասական երևույթ է: Գյուղական բնակավայրերից քաղաքներ էական արտահոսքի հետևանքներն են. մրցակցության աճը տեղական աշխատաշուկաներում, աշխատանքային ռեսուրսների ոլորտային և տարածաշրջանային բաշխման անհամաչափությունները:

Աշխատաշուկան ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական համակարգի առանցքային, կենսական օղակներից մեկն է: Ներկայիս պայմաններում ավելի է կարևորվում ՀՀ աշխատաշուկայի և զբաղվածության վերլուծությունը:

2021թ-ին 2020 թ-ի համեմատ **աշխատանքային ռեսուրսները** (15+ բարձր մշտական բնակչությունը) բացարձակ գումարով աճել է 28100-ով, հարաբերական մեծությամբ 1.2%-ով: Աշխատանքային ռեսուրսները կառուցվածքի առումով ունեցել է նույն տեսակարար կշիռը պահպանվելով աշխատուժի և աշխատուժից դուրս բնակչությունը համապատասխանաբար 55% և 45%: 2021թ-ին աշխատուժից դուրս բնակչության թիվն աճել է 26400-ով՝ հարաբերական մեծությամբ 2.5 տոկոսով, այդ աճին նպաստել է սովորողները, SS վարողներ, կենսաթոշակառուները: Աշխատուժից դուրս բնակչության թվի աճը ապահովողների մի մասը հույսը կորցնելով, աշխատանք չփնտրելով կարող են համալրված լինել անապահովության նպաստ ստացողների քանակին: 2021 թ-ին աշխատանքային ռեսուրսները ըստ տարիքային խմբերով՝ միջազգայնորեն ընդունված 15-64 աշխատանքային տարիքը կազմում է 83%, 65-74՝ 11%, 75> 6%: 2020թ-ի հետ համեմատ 2021թ-ին աշխատանքային ռեսուրսներում 1 տոկոսային կետով նվազել է միջազգայնորեն ընդունված աշխատանքային տարիքով մարդկանց տեսակարար կշիռը և այդ նույն չափով ավելացել է 65-74 տարիքով աշխատանքային ռեսուրսների տեսակարար կշիռը: 2021 թ-ին մշտական բնակչությունը ըստ տարիքային խմբերով՝ 15-64 կազմում է 66%, 65-74՝ 9%, 75>5%, 15< 20%՝ աշխատունակ տարիքից փոքր բնակչությունը: 2020թ-ի հետ համեմատ 2021թ-ին էական փոփոխություն եղել է 65-74 տարիքային խումբը, որը մոտ 2 տոկոսային կետով ավելացել է: Աշխատունակ տարիքից ներքև գտնվող բնակչության և աշխատունակ տարիքի բնակչության հարաբերակցությանը 2011-2021թթ-ին, բացառությամբ 2012-2013թթ-ին,

մշտապես մնացել է անփոփոխ կազմել է 0.25: Այդ հարաբերակցության ամենաբարձր արժեքը եղել է 2012-2013թթ-ին կազմելով 0.27: 2021-2020թթ.-ին աշխատանքային ռեսուրսներում տղամարդիկ կազմել են համապատասխանաբար 45.3%, 44.6%, իսկ կանայք՝ 54.7% և 55.4%: Կառուցվածքային առումով մեծացել է տղամարդ աշխատանքային ռեսուրսի տեսակարար կշիռը, սակայն բացարձակ գումարով տղամարդ աշխատանքային ռեսուրսը նվազել է 6.1 հազ.-ով, իսկ կին աշխատանքային ռեսուրսը ավելացել 34.2 հազ.-ով: 2020-2021 թթ-ին ըստ բնակավայրի աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխվածությունից պարզվում է, որ աշխատանքային ռեսուրսների համապատասխանաբար 60.1% և 59.5% գտնվում է քաղաքում, իսկ գյուղում 39.9% և 40.5%, ընդ որում 2020-2021թ.-ին ամբողջ քաղաքային աշխատանքային ռեսուրսների համապատասխանաբար 50.3%-ը և 51.3 %-ը կենտրոնացվել է Երևան քաղաքում: Երևանը աչքի է ընկնում սոցիալ-տնտեսական զարգացման կուտակված մակարդակով և գիտակրթական ներուժի բարձր կենտրոնացվածությամբ և իր զարգացմամբ նպաստեց տնտեսության դիվերսիֆիկացիան, ներդրումների ներհոսքի, ֆինանսական հոսքերի ավելացմանը, առևտրա-լոգիստիկ կապերի ընդլայնմանը, 2020թ.-ի համեմատ 2021թ-ին աշխատանքային ռեսուրսները բացարձակ գումարով աճել են ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում համապատասխանաբար 3.3 հազ և 24.9 հազ, ակնհայտ է, որ էական աճը եղել է գյուղում[1]:

Աշխատանքային ռեսուրսներն ըստ սեռի, բնակավայրի և տարիքային խմբերի դինամիկան ներկայացնելու նպատակով կազմվել է աղյուսակ 2-ը:

Աղյուսակ 2

Աշխատանքային ռեսուրսներն ըստ սեռի, բնակավայրի և տարիքային խմբերի[2]

Տարիներ	Ընդամենը	Տղամարդ	Կին	Քաղաք	Գյուղ	15-64
	հազ, մարդ					
2011	2286.3	1017	1269.3	1498.3	788.0	2047.0
2012	2 260.8	1 004.7	1256.1	1 475.1	785.7	2040.1
2013	2 189.1	974.9 1	1 214.1	1 395.5	793.5	1971.7
2014	2 180.2	956.7	1 223.4	1 389.8	790.4	1995.5
2015	2 106.6	940.2	1 166.5	1 313.4	793.2	1911.8
2016	2 011.4	905.2	1 106.2	1 256.8	754.6	1810.2
2017	2 021.3	914.5	1 106.8	1 249.7	771.6	1815.5
2018	2196.4	1022.7	1173.7	1261.3	935.1	2020.3
2019	2201.1	1024.1	1177.1	1357.4	843.7	2003.0
2020	2200.0	1009.6	1190.4	1321.0	879.1	1968.1
2021	2227.1	1007.4	1219.7	1 327.3	899.8	1967.1

[1] Հաշվարկների համար հիմք է հանդիսացել Հայաստանի ժողովրդագրական ժողովածու - 2022 տվյալները https://www.armstat.am/file/article/demog_2022_2.pdf 08.07.2023

[2] ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ 2012-2022թթ.-ի հրապարակումների հիման վրա

2011-2016թթ-ին աշխատանքային ռեսուրսները ունեցել են նվազման միտում: 2011թ.-ի հետ համեմատ 2016 թ.-ին այդ նվազումը բացարձակ գումարով կազմել է 274.9 հազ, իսկ հարաբերական մեծությամբ մոտ 12%, միջին հաշվով տարեկան նվազումը կազմել է 2.4%: 2017 թ-ին աշխատանքային ռեսուրսները ավելացել են, սակայն 2011 թ.-ի համեմատ այն բացարձակ գումարով նվազել է 265 հազ-ով, հարաբերական մեծությամբ մոտ 11.5%-ով, տարեկան միջին հաշվով նվազումը կազմել է մոտ 2%, սակայն հիմնական աշխատանքային տարիքի աշխատանքային ռեսուրսները 2014-2017թթ-ին ունեցել է նվազման միտում: Դիտարկելով 2018-21թթ-ի տվյալները ակնհայտ է՝ աշխատանքային ռեսուրսները ունեցել են աճի միտում, որը 2018թ.-ի հետ համեմատ բացարձակ գումարով աճել է 30.7 հազ-ով, հարաբերական մեծությամբ մոտ 1.4%, սակայն հիմնական աշխատանքային տարիքի աշխատանքային ռեսուրսները ունեցել են նվազման միտում:

2011-2014թթ-ին աշխատանքային ռեսուրներն ունեցել է նույն կառուցվածքը՝ տնտեսապես ակտիվ բնակչություն կազմել է 63%, իսկ տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն 37%, իսկ 2015թ.-ից տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը հիմնականում ունեցել է նվազել միտում և ժամանակ առ ժամանակ պահպանել է նախորդ ժամանակաշրջանի մակարդակը, որի արդյունքում 2021թ.-ին տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը կազմել է 58%, ինչը 2011թ-ի հետ համեմատ փոքր է 5 տոկոսային կետով: Ակնհայտ է, որ կառուցվածքային առումով աշխատանքային ռեսուրսների բարելավումը նվազել է:

2021 թ-ին 2011թ-ի համեմատ հիմնական աշխատանքային տարիքի աշխատանքային ռեսուրսները նվազել են, որը բացարձակ գումարով կազմել է 79.9 հազ, իսկ հարաբերական մեծությամբ մոտ 3.9%: Ինչպես 2018-2021թթ.-ին, այնպես էլ 2014-17թթ-ին հիմնական աշխատանքային տարիքի աշխատանքային ռեսուրսների տեսակարար կշիռը ընդհանուր աշխատանքային ռեսուրսներում ունեցել է նվազման միտում՝ համապատասխանաբար 92%-ից 88.3% և 91.5%-ից 89.8%: Սեռային առումով աշխատանքային ռեսուրսներում տղամարդ աշխատանքային ռեսուրսը բացառությամբ 2017թ-ը և 2019թ-ը ունեցել է նվազման միտում: Կին աշխատանքային ռեսուրսը 2011-2017-թթ.ին հիմնականում ունեցել է նվազման միտում 2011թ-ի հետ համեմատ 2017թ.-ին նվազումը հարաբերական մեծությամբ կազմել է մոտ 13%, սակայն 2018-2021թթ.-ին աճել է հարաբերական մեծությամբ կազմել է մոտ 4%: 2018-2021թթ.-ին աշխատանքային ռեսուրսներում տղամարդ աշխատանքային ռեսուրսի տեսակարար կշիռը նվազել է՝ 46.5%-ից մինչև 45.2%, իսկ կանանցը աճել է՝ 53.5%-ից 54.8%: Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ բնակավայրի առումով աշխատանքային ռեսուրսների հիմնական մասը կենտրոնացված է քաղաքում, 2019թ.-ից աշխատանքային ռեսուրսներում դրանց տեսակարար կշիռը ունեցել է նվազման միտում 61.6 %-ից մինչև 59.5%, սակայն բացարձակ գումարով, բացառությամբ 2019թ-ը ունեցել է աճի միտում: 2011-2017թթ-ին քաղաքում աշխատանքային ռեսուրսները բացարձակ գումարով ունեցել է նվազման միտում, իսկ գյուղում՝ վեր ի վայր բնույթ:

Աշխատունակ տարիքի մշտական բնակչությունն ըստ երիտասարդ, հիմնական, վերին աշխատունակ և կենսաթոշակային տարիքի դինամիկան ուսումնասիրելու նպատակով կազմվել է աղյուսակ 3-ը:

Աղյուսակ 3

Աշխատունակ տարիքի մշտական բնակչությունն ըստ երիտասարդ, հիմնական, վերին աշխատունակ տարիքի և կենսաթոշակային տարիքի 2017-2022թթ-ին, հազ[1]

Տարիներ	Երիտասարդ աշխատունակ տարիք 15-29,	Հիմնական աշխատունակ տարիք 30-44,	Վերին աշխատունակ տարիք 45-59	Կենսաթոշակային աշխատունակ տարիք 60-74	
2017	655.9	654.5	579.3	335.9	
2018	625.7	666.4	564.3	355.6	
2019	600.9	679.3	548.7	382.6	
2020	577.6	693.3	533.2	409.5	
2021	557.6	713.0	522.1	434.1	
2022	540	726.8	511.8	450.9	
15-74 տարիքային սահմանում մշտական բնակչությունում տեսակարար կշիռը, %					
2017	29.5	29.4	26	15.1	
2018	28.2	30.1	25.6	16.1	
2019	27.2	30.7	24.8	17.3	
2020	26.1	31.3	24.1	18.5	
2021	25.1	32	23.4	19.5	
Մշտական բնակչությունը 15-74,					
2017	2018	2019	2020	2021	2022
2212.0	2225.6	2211.5	2213.6	2226.8	2229.5

Աղյուսակում 2-ում կատարված հաշվարկներից հետևում է, որ 2017-2022թթ.-ին երիտասարդ և վերին աշխատունակ տարիքի մշտական բնակչությունը մշտապես ունեցել է նվազման միտում՝ 2017թ.-ի հետ համեմատ նվազումը բացարձակ գումարով համապատասխանաբար կազմել է 115.9 հազ և 67.5 հազ, հարաբերական մեծությամբ մոտ 17.7% և 11.6%, մշտապես աճել է հիմնական և կենսաթոշակային աշխատունակ տարիքի մշտական բնակչությունը բացարձակ գումարով համապատասխանաբար 72.3 հազ-ով և 115 հազ-ով, իսկ հարաբերական մեծությամբ 11%-ով և 34.2%-ով: Կառուցվածքային առումով երիտասարդ և վերին աշխատունակ տարիքի մշտական բնակչության տեսակարար կշիռը մշտապես ունեցել է նվազման միտում՝ 2017թ.-ի հետ համեմատ նվազումը համապատասխանաբար կազմել է 4.4% և 2.6%, իսկ հիմնական և կենսաթոշակային աշխատունակ տարիքի մշտական բնակչության աճի միտում՝ համապատասխանաբար 2.6% և 4.4%-ով:

[1] Աղյուսակի ցուցանիշները կազմվել է հեղինակի կողմից Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի 2017-2022 հրապարակումների հիման վրա

Աշխատանքային ռեսուրսների հիմնական մասը աշխատուժն է: Վերջինս առանձնահատուկ ապրանք է, որի արտադրական և ստեղծագործական որակներով պայմանավորված է երկրի տնտեսական անվտանգությունը, մրցունակ տնտեսության արդյունավետությունը, բարձրորակ ապրանքներ և հարմարավետ ծառայություններ ստեղծելու կարողությունը, գիտատեխնիկական և կազմակերպչական վերափոխումների մասշտաբն ու տեմպը: Աշխատուժը ընդգրկելով զբաղվածները և գործազուրկները ձևավորում է աշխատուժի **առաջարկը**՝ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման համար: Այս ցուցանիշով կարող է բացահայտվել բնակչության շրջանում զբաղվածության հիմնախնդիրները հարցման ժամանակ:

Համաձայն Աշխատատեղերի ապագան Հայաստանում (2019) Հայաստանի ազգային մրցունակության զեկույցի, 2030թ. աշխատուժի միայն 20%-ը կլինի նորեկ, իսկ ամենամեծ մասնաբաժինը կկազմեն այս պահին ֆորմալ կրթության ցիկլն արդեն ավարտածները[1]: 2025 թվականին վերլուծական մտածողությունը, կրեատիվությունը և ճկունությունը կլինեն ամենապահանջված հմտություններից: Գործատուները կարծում են, որ առաջիկա տարիներին կմեծանան քննադատական մտածողության, վերլուծության և խնդիրների լուծման հմտությունները[2]:

Պատերազմի կործանարար հետևանքների, դրա արդյունքում արտագաղթի ծավալների հնարավոր աճի, ինչպես նաև համաճարակի արդյունքում հեռահար աշխատանքի լայն տարածում գտնելու արդյունքում այսօր ՀՀ-ում նկատվում է աշխատուժի զգալի պակաս: Սա վերաբերում է ինչպես մասնագիտական բարձր որակավորում ունեցող մասնագետներին, այնպես էլ արհեստագործական ոլորտին և բանվորական ուժին, ինչի խիստ պահանջարկը նույնպես ակնհայտ է[3]:

Աշխատուժի առաջարկը վերլուծելիս հաշվի է առնվում տնտեսապես ակտիվ բնակչության թիվը և դրա դինամիկան, զգայունությունը տարբեր գործոնների նկատմամբ՝ աշխատավարձի դրույքաչափ, արտադրողականություն, տնտեսական քաղաքականությունը: Աշխատուժի առաջարկը պետք է որոշվի՝ հաշվի առնելով աշխատուժի թվաքանակի, տարիքային և սեռի կառուցվածքի, բնակչության տարբեր խմբերի տնտեսական ակտիվության և զբաղվածության մակարդակի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը: 2011-2016թթ-ին տնտեսապես ակտիվ բնակչությունը բացարձակ գումարով հիմնականում ունեցել է նվազման միտում, հարաբերական մեծությամբ 2011թ-ի հետ համեմատ այն կազմել է 14.8%, այն դեպքում երբ աշխատանքային ռեսուրսների նվազել են 12%-ով: 2018թ.-ի հետ

---

[1] Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, Աշխատատեղերի ապագան Հայաստանում, Ի-ՎԻ Քոնսալթինգ, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2019, 135էջ, էջ 9, www.ev.am

[2] https://www.imf.org/external/pubs/ft/fandd/2020/12/pdf/WEF-future-of-jobs-report-2020 zahidi.pdf

[3] Ավետիսյան Լ., ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ 2021 ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ, https://staff.am/staffmedia/ra-labor-market-2021/ Վերջին մուտք 13.11.2023

համեմատ 2021թ-ին աշխատուժը նվազեց 6.3 հազ-ով կամ 0.4 %-ով աշխատանքային ռեսուրսների 1.3% աճի պայմանում[1]:

Աշխատուժի մասնակցության մակարդակով գնահատվում է աշխատաշուկայի գործունեության մասնակցությունը՝ աշխատելով կամ աշխատանք փնտրելով, որով ձևավորվում է պատկերացում ապրանքների և ծառայությունների արտադրությանը մասնակցելու ցանկություն ունեցող երկրի աշխատունակ տարիքի հարաբերական առաջարկի ցուցանիշի մասին:

Աշխատուժի մասնակցության ցուցանիշը առանցքային դեր ունի երկրի մարդկային ռեսուրսների չափն ու կազմը որոշող գործոնների ուսումնասիրության, ապագա աշխատուժի առաջարկի կանխատեսման գործում: Մշակվող տեղեկատվությունը կարող է կիրառվել զբաղվածության քաղաքականության ձևավորման, մասնագիտական վերապատրաստման կարիքները որոշման, տղամարդկանց և կանանց աշխատանքային կյանքի տևողությունը հաշվարկելու, տնտեսական գործունեություն մուտք գործող և ելնող բնակչության համամասնությունը որոշելու, սոցիալական ապահովության համակարգերի ֆինանսական պլանավորման համար[2]: Աշխատուժի մասնակցության ցուցանիշը հնարավորություն է տալիս նաև գնահատել բնակչության տարբեր խմբերի վարքագիծը աշխատաշուկայում: Աշխատուժի մասնակցության մակարդակը և կառուցվածքը կախված է զբաղվածության հնարավորություններից և պահանջվող եկամուտից, որոնք կարող են տարբերվել միմյանցից բնակչության տարբեր խմբերում: Ինչպես 2014-2017թթ-ին, այնպես էլ 2018թ.-ից, բացառությամբ 2019թ-ը, աշխատուժի մասնակցության մակարդակ ունեցել է նվազման միտում 58.9% -ից 57.8%[3]: 2020թ.-ի հետ համեմատ 2021թ-ին աշխատուժը աճել է 1.7 հազ-ով կամ 0.1 տոկոսային կետով, իսկ աշխատուժի մասնակցության մակարդակ կազմել է մոտ 55 %: Վերջինս համահունչ չէ ՏՀԶԿ երկրների մակարդակին (73%)[4]: Հետևաբար մեր երկրում առկա է աշխատուժի ընդգրկվածության թույլ մակարդակ:

2020թ-ի համեմատ 2021թ-ին +15 տարիքի բնակչության հաշվով տեղի է ունեցել տնտեսապես ակտիվ բնակչության կառուցվածքի բարելավում՝ զբաղվածների տեսակարար կշռի 3% աճով զբաղվածների թվաքանակի ավելացման պայմանում և գործազուրկների թվաքանակի նվազման հաշվին: 2014-2020թթ-ին տնտեսապես ակտիվ բնակչության կառուցվածքի էական փոփոխություն չի դրսևորվել, քանի որ զբաղվածների տեսակարար կշիռը կազմել է տնտեսապես ակտիվ բնակչության 81-82%: Տնտեսապես ակտիվ բնակչությունում զբաղվածների տեսակարար կշռի աճը կարելի է համարել որպես նոր աշխատատեղերի

---

[1] Վերլուծության համար հիմք է հանդիսացել ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ, 2012-2022

[2] Ключевых показателей рынка труда 9-го издания https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms_498941.pdf ñ. 65, 13.02.2023

[3] Հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների թվաքանակի նկատմամբ

[4] РЫНОК ТРУДА КАЗАХСТАНА развитие в условиях новой реальности , 2021, с.61

ավելացում՝ տնտեսապես ակտիվ բնակչության հարմարվողականության գործընթաց Հայաստանի Հանրապետության ժամանակակից աշխատաշուկայում ձևավորված պահանջներին:

15-64 տարիքային սահմանում աշխատուժի տնտեսական ակտիվության մակարդակի դինամիկան ուսումնասիրելու նպատակով կազմվել է աղյուսակ 4:

Աղյուսակ 4

15-64 տարիքային սահմանում աշխատուժի տնտեսական ակտիվության մակարդակի դինամիկան 2011-2021թթ-ին, հազ[1]

Տարիներ	Աշխատուժը 15-64 տարիքային սահմանում	Տղամարդ աշխատուժը 15-64 տարիքային սահմանում	Կին աշխատուժը 15-64 տարիքային սահմանում	Աշխատուժում 15-64 տարիքային սահմանի տեսակարար կշիռը, %	Ընդհանուր աշխատուժում տղամարդ աշխատուժի տեսակարար կշիռը 15-64 տարիքային սահմանում, %	Ընդհանուր աշխատուժում կին աշխատուժի տեսակարար կշիռը 15-64 տարիքային սահմանում, %	Տնտեսական ակտիվության մակարդակը[2]
2011	1351.4	692.5	658.8	91.2	51	49	71.3
2012	1335.2	680.7	654.4	94.1	51	49	65.4
2013	1308.7	666.9	641.8	94.2	51	49	66.3
2014	1309.4	664.4	644.9	95.1	50.7	49.3	65.6
2015	1244.9	643	601.9	94.6	51.7	48.3	65.1
2016	1157.4	607.2	550.1	94.4	52.5	47.5	63.9
2017	1155.2	605.2	550.0	93.9	52.4	47.6	63.6
2018	-	-	-	-	-	-	-
2019	1257.1	697.5	559.6	95.4	55.5	44.5	62.7
2020	1225.7	663.4	562.3	95.4	54.1	45.9	62.2
2021	1215.2	663.7	551.5	94.3	54.6	45.4	61.7

15-64 տարիքում աշխատուժի առաջարկը 2011-2013թթ-ին, 2014-2017թթ-ին ունեցել է նվազման միտում, 2019-2021թթ-ին նվազել է 2021թ-ին կազմելով 1215.2 հազ, որը 2019թ-ի ցուցանիշից փոքր է 33.8 հազ-ով: Աշխատուժում դրանց տեսակարար կշիռը 2011-2014թթ-ին ավելացել է 0.5 տոկոսային կետով կազմել է 94.2, 2014-2017թթ-ին նվազել է՝ 95.1 %-ից հասնելով 93.9 %, 2019-2021թթ-ին 95.4 %-ից նվազել է 94.3 %: 2011-2021թթ.-ին սեռային առումով 15-64 տարիքում աշխատուժի առաջարկում գերակշռում են տղամարդիկ 51-55% հիմնականում դրսևորել է աճի միտում, 2018 թ-ի հետ համեմատ 2021-ին տղամարդկանց տեսակարար կշիռը նվազել է 0.9 տոկոսային կետով կազմելով 54.6%, կանանց

[1] Աղյուսակում ներկայցված ցուցանիշները հաշվարկվել է հեղինակի կողմից հեիմք ընդունելով ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ, 2012-2022 թթ-ի տվյալները

[2] Աշխատուժը 15-64 տարիքային սահանում հարաբերած աշխատանքային ռեսուրս 15-64 տարիքային սահանում

տեսակարար կշիռը հիմնականում ավելացել է և 2021 թ-ին 2018թ-ի հետ համեմատ աճել է 0.9 տոկոսային կետով և կազմել է 45.4%: 15-64 տարիքում աշխատուժի ընդգրկվածության թույլ մակարդակը նվազել է 2011-2012թթ-ին, 2014-2017թթ-ին՝ 65.6%-ից նվազել է մինչև 63.6%, 2019-2021թթ.-ին՝ 62.7%-ից նվազել է մինչև 61.7%, այն դեպքում, երբ 2019թ-ի հետ համեմատ 2021թ-ին 15-64 տարիքում աշխատուժը նվազել է 3.3 %-ով, իսկ այդ տարիք աշխատանքային ռեսուրսները 1.7%-ով:

Մինչ կենսաթոշակային տարիքի (55-ից մինչև 64 տարեկան) մարդկանց տնտեսական ակտիվության մակարդակը 2014-2017թթ.-ին կազմել է 64.6%, 2019-2021թթ-ին 58.5%, որը զիջում է ՏՀԶԿ երկրներում մեծահասակների ակտիվությունը միջին մակարդակը[1]: ՏՀԶԿ երկրներում մեծահասակների ակտիվությունը միջինում կազմում է 64%[2]: Տարեց մարդկանց աշխատուժի մասնակցության համեմատաբար ցածր մակարդակի հիմնական պատճառներից մեկը գործատուների դժկամությունն է՝ աշխատանքի ընդունելու և պահելու տարեց աշխատողներին աշխատավարձի մակարդակի կախվածության պատճառով: Մինչ կենսաթոշակային տարիքի աշխատողներին վարձատրելու ծախսերը կարող են սկսել գերազանցել նրանց արտադրողականությունը դեռևս կենսաթոշակային տարիքի հասնելուց առաջ և ավելի քիչ հարմարվող բիզնեսի փոփոխվող կարիքներին՝ արդի հմտություններ չունենալու պատճառով:

Աշխատուժի մասնակցության մակարդակը կանանց համար ավելի ցածր է, քան տղամարդկանց: Երբ կանայք հասնում են աշխատանքային գագաթնակետին հետ են մնում աշխատուժի մասնակցության առումով տղամարդկանցից, բայց նաև ցույց են տալիս, որպես կանոն, մասնակցության փոքր-ինչ տարբեր ձևեր:

55-64 տարիքային սահմանում աշխատուժի տնտեսական ակտիվության մակարդակի դինամիկան ուսումնասիրելու նպատակով կազմվել է աղյուսակ 5:

Աղյուսակ 5

55-64 տարիքային սահմանում աշխատուժի տնտեսական ակտիվության մակարդակի դինամիկան 2011-2021թթ-ին, հազ[3]

Տարիներ	Աշխատանքային ռեսուրս 55-64 տարիքային սահմանում	Աշխատուժ 55-64 տարիքային սահմանում	Տնտեսական ակտիվության մակարդակ, %
2011	331.8	225.7	68
2012	347	233.2	67.2
2013	380.5	265.9	69.8

[1] Հաշվակների համար հիմք է հանդիսացել Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի և Աշխատանքի շուկան Հայաստանում 2015– 2022թթ հրապարակումները

[2] РЫНОК ТРУДА КАЗАХСТАНА развитие в условиях новой реальности , 2021, с.61

[3] Աղյուսակում ներկայցված ցուցանիշները հաշվարկվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ, 2012-2022 թթ-ի տվյալները

2014	363.9	240.1	65.9
2015	372.8	244.1	65.4
2016	389.6	250.6	64.3
2017	396.3	248.9	62.8
2018	446	-	-
2019	449.7	252.5	56.1
2020	463.6	277.1	59.7
2021	480.7	287.3	59.7
Միջինը 2014-2017	-	-	64.6
Միջինը 2019-2021	-	-	58.5

ՀՀ աշխատուժի մասնակցության մակարդակը նվազել է տնտեսական աճի հետ մեկտեղ: Տնտեսական աճը ենթադրում է կրթական հաստատությունների ցանցի ընդլայնում և ուսման համար ժամանակի երկարացում, աշխատատար գյուղատնտեսական աշխատանքից քաղաքներում տնտեսական գործունեության անցում և եկամտի հնարավորությունների ավելացում, հատկապես, երբ ընտանիքի ղեկավարը գտնվում է «պիկ» աշխատանքային տարիքում (25-ից մինչև 54 տարեկան), որպեսզի ընտանիքի մյուս անդամները, ովքեր ի վիճակի են ավելի քիչ վաստակել, կարող են կամովին հրաժարվել աշխատելուց: Այս գործոնները միասին նվազեցնում են մասնակցության ընդհանուր մակարդակը:

Բոլոր երկրներում մարդկային ռեսուրսները ուղղակիորեն կամ անուղղակիորեն ամենաարժեքավոր և արդյունավետ ռեսուրսն են: Ավանդաբար յուրաքանչյուր երկրում սպառման և առևտրի համար ապրանքների և ծառայությունների արտադրությունը կախված է աշխատակիցների առողջությունից, ուժից և հիմնական հմտություններից: Տնտեսական աճի և բարեկեցության մակարդակի բարձրացումը կախված է ամբողջ բնակչության գրագիտության և կրթվածության մակարդակից: Աշխատուժի հմտության մակարդակի առավել մատչելի ցուցանիշներից է աշխատուժի կրթության մակարդակը: Այն կարևոր գործոններից է, որով ազդելով աշխատողների աշխատունակության վրա որոշվում է երկրի համաշխարհային շուկաներում հաջողությամբ և կայուն մրցակցելու կարողությունը, տեխնոլոգիական առաջընթացի ձեռքբերումների արդյունավետ արագ օգտագործումը:

Ուսումնասիրելով առկա տեղեկատվությունը, կարող ենք նշել, որ ինչպես 2011-2013թթ-ին, այնպես էլ 2014-2017թթ-ին բարձրագույն, հետ բուհական աշխատուժը դրսևորել է վայր ի վեր բնույթ, 2019-2021թթ-ին ունեցել է աճի միտում՝ 2021թ-ին 2018թ-ի հետ համեմատ ավելացել 64.7 հազ-ով հարաբերական մեծությամբ 17.9%-ով, կառուցվածքի առումով 27.9%–ից հասել է 33%: 2011-2017թթ-ին միջին մասնագիտական, նախամասնագիտական աշխատուժը նույնպես ունել է վայր ի վեր բնույթ, 2019-2021թթ-ին ունեցել է աճի միտում՝ 2021թ-ին 2018թ-ի հետ

համեմատ ավելացել 15.4 հազ-ով հարաբերական մեծությամբ 4.9%-ով, միաժամանակ տեսակարար կշիռը 2021թ.-ին 2018թ-ի հետ համեմատ ավելացել է 1.2 տոկոսային կետով կազմելով 25%: Միջնակարգ կրթությամբ աշխատուժը 2011-2021թթ-ին հիմնականում ունեցել է նվազման միտում, 2021թ-ին 2018թ-ի հետ համեմատ այն նվազել է 56.4 հազ-ով, հարաբերական մեծությամբ 10.1%, դրան զուգահեռ նույնպես նվազել է աշխատուժում տեսակարար կշիռը և 2021թ-ին կազմել է 39%, ինչը 3.7 տոկոսային կետով զիջում է 2018թ-ի ցուցանիշը: Տարրականի, ոչ լրիվ տարրականի տեսակարար կշիռը ընդհանուր աշխատուժում 2021 թ-ին կազմել է 3%, որը 2.6 տոկոսային կետով զիջում է 2018թ-ի ցուցանիշը: Ընդհանուր առմամբ աշխատուժի որակական մակարդակը 2018-2021թթ-ին բարձրացել է:

15+ 2020թ.-ի հետ համեմատ 2021-ին կրթական առումով արձանագրվել է բարձրագույն, հետբուհական որակավորված, միջնակարգ ընդհանուր աշխատուժի բացարձակ մեծության աճ, իսկ հիմնական ընդհանուր և ցածր աշխատուժը նվազել է: Կառուցվածքային առումով էական փոփոխություն չեն եղել է: Տղամարդ բարձրագույն, հետբուհական աշխատուժի տեսակարար կշիռը ավելացել է, իսկ հիմնական ընդհանուր և ցածր աշխատուժի տեսակարար կշիռը ինչպես տղամարդ, այնպես էլ կին առումով նվազել է, այսինքն որակական տեսանկյունից բարելավել է:

Աշխատանքային ռեսուրսների բաղկացուցիչ մաս է տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թիվը: 2011-2013 տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թիվը նվազել է, հարաբերական մեծությամբ այն կազմել է 5.3% աշխատանքային ռեսուրսների 4.2% նվազման պայմանում, սակայն տնտեսապես ոչ ակտիվ բնակչության մակարդակը մնացել է անփոփոխ 37%: Կառուցվածքային առումով էական փոփոխություն եղել է SS վարողների մասով: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության հարաբերական մեծությունը մնացել է անփոփոխ կազմելով՝ 37%:

2014-2017թթ-ին աշխատանքային ռեսուրսները և տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն ունեցել են նվազման միտում, բացառությամբ 2017թ-ին ավելացել է, սակայն 2014թ-ի մեծությունից համապատասխանաբար բացարձակ գումարով փոքր է 158.9 հազ-ով և 13.9 հազ-ով, իսկ հարաբերական մեծությամբ համապատասխանաբար 7.2 %-ով և 1.7 %-ով: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության հարաբերական մեծությունը աճել է 2 տոկոսային կետով՝ 37-39%: Կառուցվածքային առումով տնտեսապես ոչ ակտիվ բնակչության էական փոփոխություն եղել է սովորողների մասով, որոնց տեսակարար կշիռը ունեցել է նվազման միտում 20%-ից հասնելով 17%:

2018-2021թթ-ին, բացառությամբ 2020թ-ին, աշխատանքային ռեսուրսները և տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը ունեցել են աճի միտում, հարաբերական մեծությամբ համապատասխանաբար 1.7 %-ով և 4.1 %-ով: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության հարաբերական մեծությունը աճել է 1.1 տոկոսային կետով: Կառուցվածքային առումով տնտեսապես ոչ ակտիվ բնակչության էական փոփո-

խություն եղել է սովորողների մասով, որոնց տեսակարար կշիռը ունեցել է աճ միտում 14%-ից աճել է մինչև 19%, կենսաթոշակառուներին՝ 18% -ից աճել է մինչև 29%:

Սեռային առումով 2011-2013թթ-ին ՝ աշխատուժից դուրս բնակչության թիվի 32-33% կազմել են տղամարդիկ: 2014-2017թթ-ին աշխատուժից դուրս տղամարդկանց թիվը ունեցել է աճի միտում դրան զուգահեռ դրանց տեսակարար կշիռը ավելացել է 31.9 %-ից մինչև 33.9%, իսկ կանանց մասով հակառակ միտում է դրսևորվել: 2018-2019 թթ.-ին աշխատուժից դուրս բնակչությունում տղամարդկանց թիվը 2018թ-ի հետ համեմատ նվազել է 0.6 հազ-ով, իսկ դրանց տեսակարար կշիռը կազմել է 32.8%, ինչը նախորդ տարվա հետ համեմատ ավել է 0.6 տոկոսային կետով: 2021թ-ին 2020-ի հետ համեմատ աշխատուժից դուրս բնակչության թվում կանանց տեսակարար կշիռը նվազել է 2.1% տոկոսային կետով և կազմել է 65.7%, ինչը տեղի է ունեցել այդ կարգավիճակի կանանց 5.6% նվազման դեպքում:

Կանանց շրջանում տնտեսական անգործության մակարդակը օգնում է բացահայտելու երկրի սոցիալական հիմքերը, վերաբերմունքը աշխատող կանանց և ընդհանրապես ընտանիքի կառուցվածքի նկատմամբ:

Հետաքրքրություն է ներկայանում է աշխատաշուկայից դուրս գտնվող այն մարդկանց նկատմամբ, ովքեր ցանկանում են աշխատել, բայց ներկայումս աշխատանք չեն փնտրում, ինչը հիմնականում կապված է զարգացող և զարգացած երկրներում արժանապատիվ և արդյունավետ աշխատատեղերի հասանելիության բարձրացման մարտահրավերի հետ[1]:

Գիտական նորույթը: Գիտական աղբյուրների և վերլուծության արդյունքների հիման վրա ներկայացվել է ՀՀ աշխատաշուկայի միտումները և առանձնահատկությունները:

Եզրակացություն: Ժամանակակից տնտեսական պայմաններում աշխատաշուկան տարասեռ է և բաղկացած է բազմաթիվ ոլորտներից, հատվածներից, որոնք տարբերվում են միմյանցից ինքնավարության, հավասարակշռության, կայունության տարբեր աստիճաններով: Երկրորդ, առկա է ինտեգրված մոտեցման օբյեկտիվ անհրաժեշտություն, որը հաշվի կառնի տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները, տեղական տարածքի զարգացումը և մշակութային և պատմական պայմանները: Նման տարածական մակարդակում անհրաժեշտ է փոխգործակցություն կրթական հաստատությունների, զբաղվածության ծառայությունների և գործատուների միջև: Երրորդ, տարածաշրջանային աշխատաշուկան բաց դինամիկ սոցիալ-տնտեսական համակարգ է, որը բնութագրվում է համակարգի բաղկացուցիչ տարրերի որակներն արտացոլող փոփոխականներով՝ տարրերի ամբողջականություն և մեկուսացում, հարմարվողականու-

[1] http://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/--- stat/documents/publication/wcms_220535.pdf

թյուն, ինչերցիա և այլն: Տարածաշրջանային աշխատաշուկայի հիմնական բնութագրիչներն են վիճակը, զարգացումը, հավասարակշռությունը և կայունությունը: Չորրորդ՝ տարածաշրջանային աշխատաշուկայի գործունեությունը պետք է գնահատվի բազմաթիվ չափանիշներով: Չափանիշը պետք է հասկանալ որպես նշան, որի հիման վրա իրականացվում է դասակարգումը: Որոշակի հատկանիշի քանակական բնութագիրը ցուցիչ է: Քանի որ աշխատուժի առաջարկը մեծապես որոշվում է դրա վերարտադրության գործընթացով, ուղղակի կապ կա այդ գործընթացի և տարածաշրջանային աշխատաշուկայի հավասարակշռության միջև:

Աշխատաշուկայում իրավիճակի բարդացումը տեղի է ունեցել **ժողովրդագրական գործոնների ազդեցության** ֆոնին՝ կապված բնակչության և աշխատանքային ռեսուրսների բնական աճի, ինչպես նաև միգրացիոն գործընթացների զարգացման հետ: Հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրվում է անկայունությամբ, որն ավելի է սրում իրավիճակը ինչպես աշխատաշուկայում, այնպես էլ աշխատանքային միգրացիայի ոլորտում:

ՀՀ մշտական բնակչությունը 2014-2022թթ.-ին, բացառությամբ 2021թ-ը, մշտապես ունեցել է նվազման միտում: ՀՀ-ում բնակչությունը համարվում է ծերացող: Բնակչության մեծ մասը հանդիսանալով աշխատունակ տարիքի շարունակական նվազել է, միաժամանակ նկատվում է բնակչության նեղացած վերարտադրության միտում: 2011-2016թթ-ին աշխատանքային ռեսուրսները ունեցել են նվազման միտում, 2018-21թթ-ին ունեցել են աճի միտում, սակայն հիմնական աշխատանքային տարիքի աշխատանքային ռեսուրսները ունեցել են նվազման միտում: Սեռային առումով աշխատանքային ռեսուրսներում տղամարդ աշխատանքային ռեսուրսը, բացառությամբ 2017թ-ը և 2019թ-ը, ունեցել է նվազման միտում: Կին աշխատանքային ռեսուրսը սկզբնական շրջանում ունեցել է նվազման միտում, իսկ 2018-2021թթ.-ին աճել է: Բնակավայրի առումով աշխատանքային ռեսուրսների հիմնական մասը կենտրոնացված է քաղաքում: Կառուցվածքային առումով աշխատանքային ռեսուրսների բարելավումը նվազել է, քանի որ տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը նվազել է:

2011-2016թթ-ին տնտեսապես ակտիվ բնակչությունը հիմնականում ունեցել է նվազման միտում գերազանցելով աշխատանքային ռեսուրսների նվազման մակարդակը, իսկ 2018-21թ-ին աշխատուժը նվազել է աշխատանքային ռեսուրսների աճի պայմանում: 2018թ.-ից աշխատուժի մասնակցության մակարդակ հիմնականում ունեցել է նվազման միտում էականորեն զիջելով ՏՀԶԿ երկրների համապատասխան մակարդակը:

2017-2022թթ.-ին երիտասարդ և վերին աշխատունակ տարիքի մշտական բնակչությունը մշտապես ունեցել է նվազման միտում, իսկ հիմնական և կենսաթոշակային աշխատունակ տարիքի մշտական բնակչությունը մշտապես աճել է: Կառուցվածքային առումով երիտասարդ և վերին աշխատունակ տարիքի մշտական բնակչության տեսակարար կշիռը մշտապես ունեցել է նվազման մի-

տում, իսկ հիմնական և կենսաթոշակային աշխատունակ տարիքի մշտական բնակչությունը՝ աճի միտում:

15-64 տարիքում աշխատուժի առաջարկը 2011-2017թթ-ին ունեցել է նվազման միտում: Սեռային առումով աշխատուժի առաջարկում գերակշռում են տղամարդիկ 51-55%: 15-64 տարիքում աշխատուժի նվազումը էապես զիջել է այդ տարիք աշխատանքային ռեսուրսների նվազմանը, որի զուգահեռ աշխատուժի ընդգրկվածության թույլ մակարդակ նվազել է: Մինչ կենսաթոշակային տարիքի (55-ից մինչև 64 տարեկան) մարդկանց տնտեսական ակտիվության մակարդակը և նվազել է զիջելով ՏՀԶԿ երկրներում մեծահասակների ակտիվությունը միջին մակարդակը:

2011-2017թթ-ին բարձրագույն, հետ բուհական, միջին մասնագիտական, նախամասնագիտական աշխատուժը դրսևորել է վայր ի վեր բնույթ, 2019-2021թթ-ին կառուցվածքի առումով մեծացել է: Միջնակարգ, տարրականի, ոչ լրիվ տարրականի կրթությամբ աշխատուժը հիմնականում ունեցել է նվազման միտում: Ընդհանուր առմամբ աշխատուժի որակական մակարդակը 2018-2021թթ-ին բարձրացել է:

Կրթված և ստեղծագործ ակտիվ աշխատուժի պատրաստման, վերապատրաստման խթանումը, դրա որակավորման և տարածքային շարժունակության ապահովումը անհրաժեշտ է ընդունել որպես պետության տնտեսության կարևորագույն սկզբունքներից մեկը:

Աշխատաշուկայում անկայունության և բնակչության անորոշության նվազեցումը երկրի ապագա զարգացման հարցում կմեծացնի վստահությունը իրականացվող պետական սոցիալ-տնտեսական քաղաքականության վերաբերյալ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, Աշխատատեղերի ապագան Հայաստանում, Ի-ՎԻ Քոնսալթինգ, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2019, 135էջ, էջ 9, www.ev.am
2. Арутюнян Г. А., Некоторые аспекты трансформации рынка труда в условиях проникновения Интернета (на примере Армении) Սոցիալ-տնտեսական զարգացման Արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2023, էջ 254-269
3. Ավետիսյան Լ., ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ 2021 ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ, https://staff.am/staffmedia/ra-labor-market-2021/ Վերջին մուտք 13.11.2023
4. Горина Е., ИССЛЕДОВАНИЕ РЫНКА ТРУДА: МЕЖДИСЦИПЛИНАРНЫЙ ПОДХОД, СОВРЕМЕННАЯ ЭКОНОМИКА: ПРОБЛЕМЫ, ТЕНДЕНЦИИ, ПЕРСПЕКТИВЫ, № 5, 2011 ГОДУДК 316.334.2+331. 5
5. Калинников М. Рынок труда: итоги 2017 и планы на 2018. – М.: Хэдхантер, 2018. – 71 с.

6. Комлев А. Л. Региональный рынок труда (проблемы и перспективы). –Волгоград: Издательство Волгоградского института экономики, социологии и права, 2006. – 132с.
7. Маслова Е. В., Колесникова О.А., Околелых И. В. Современные трансформации рынка труда России: вызовы и необходимая реакция управления // Экономика труда. – 2022. – Том 9. – № 4. – С. 743–764. doi: 10.18334/et.9.4.114459
8. Ключевых показателей рынка труда 9-го издания https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms_498941.pdf ,
9. РЫНОК ТРУДА КАЗАХСТАНА развитие в условиях новой реальности , 2021
10. Աշխատաշուկայի միտումները Հայաստանում, ՀՊՏՀ <<Ամբերդ >> Հետազոտական կենտրոն, https://asue.am/upload/files/amberd/Ashxatashuka-compressed.pdf . Վերջին մուտք 11.11.2023
11. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ 2012-2022թթ
12. https://www.imf.org/external/pubs/ft/fandd/2020/12/pdf/WEF-future-of-jobs-report-2020 zahidi.pdf
13. http://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms_220535.pdf

References

1. Hayastani azgayin mrcownakowt'yan zekowyc, Ashxatategheri apagan Hayastanowm, I-VI Qonsalt'ing, «Tntesowt'yown & arjheqner» hetazotakan kentron, 2019, 135e'j, e'j 9, www.ev.am
2. Arutyunyan G. A., Nekotorye aspekty transformacii rynka truda v usloviyah proniknoveniya Interneta(na primere Armenii)Social-tntesakan zargacman Ardi himnaxndirnery' Hayastani Hanrapetowt'yownowm, Er&an 2023, E'j 254-269
3. Avetisyan L, HH AShXATAShOWKA 2021 AMBOGhJAKAN ZEKOWYC, https://staff.am/staffmedia/ra-labor-market-2021/ Verjin mowtq 13.11.2023
4. Gorina E., ISSLEDOVANIE RYNKA TRUDA: MEZHDISCIPLINARNYJ PODHOD, SOVREMENNAYA EKONOMIKA: PROBLEMY, TENDENCII, PERSPEKTIVY, № 5, 2011 GODUDK 316.334.2+331. 5
5. Kalinnikov M. Rynok truda: itogi 2017 i plany na 2018. – M.: Hedhanter, 2018. – 71 s.
6. Komlev A. L. Regional'nyj rynok truda (problemy i perspektivy). –Volgograd: Izdatel'stvo Volgogradskogo instituta ekonomiki, sociologii i prava, 2006. – 132s.
7. Maslova E. V., Kolesnikova O.A., Okolelyh I. V. Sovremennye transformacii rynka truda Rossii: vyzovy i neobhodimaya reakciya upravleniya // Ekonomika truda. – 2022. – Tom 9. – № 4. – S. 743–764. doi: 10.18334/et.9.4.114459
8. Ключевых показателей рынка труда 9-го издания https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---

stat/documents/publication/wcms_498941.pdf
9. RYNOK TRUDA KAZAHSTANA razvitie v usloviyah novoj real'nosti , 2021
10. AShXATANQI ShOWKAN HAYASTANOWM, VITwAKAGRAKAN JhOGhOVAC'OWI 2012-2022t't'
11. Ashxatashowkayi mitowmnery' Hayasatnowm, HPTH <<Amberd >> Hetazotakan kentron, https://asue.am/upload/files/amberd/Ashxatashuka-compressed.pdf . Verjin mowtq 11.11.2023
12. https://www.imf.org/external/pubs/ft/fandd/2020/12/pdf/WEF-future-of-jobs-report-2020 zahidi.pdf
13. http://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms_220535.pdf

ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ, ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (2011-2021ԹԹ.-ԻՆ)

Գրիգոր Թաթուլի Մանուկյան

Համառոտագիր: Հոդվածի արդիականությունը: Աշխատաշուկան շուկայական տնտեսության կարևորագույն տարրերից մեկն է: Ներկայիս պայմաններում աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության խորացումը պահանջում է ուսումնասիրել և վերլուծել աշխատաշուկայի հիմնական ցուցիչները:

Աշխատաշուկայի միտումների վերլուծությունը ամուր հիմք են ապահովում արդյունավետ զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի հետ կապված հիմնական խնդիրները գնահատելու և լուծելու համար: Դրանով էլ որոշում է ուսումնասիրության արդիականությունը:

Ուսումնասիրության նպատակն է վեր հանել ՀՀ աշխատաշուկայի միտումները և ներկայացնել դրա առանձնահատկությունները: Այդ նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները. ուսումնասիրել մշտական բնակչության, կենդանի ծնվածների և մահացություն կյանքի սպասվող տևողության դինամիկան, վերլուծել աշխատանքային ռեսուրսների կազմը և կառուցվածքը, ներկայացնել աշխատուժի և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության առանձնահատկությունները:

Մեթոդաբանություն: Ներկայացված հետազոտության համար հիմք են հանդիսացել և շրջանառություն մեջ են դրվել հայրենական և օտարերկրյա տնտեսագետների հրատարակած աշխատությունները, հոդվածները, գիտաժողովի նյութերը, վիճակագրական ժողովածուներ: Հետազոտության ընթացում կիրառվել են տվյալների հավաքագրման, համեմատական, ընդհանրացման վերլուծական մեթոդներ, որոնք թույլ են տվել բացահայտել աշխատաշուկայում տեղաշարժերը, կատարել համապատասխան եզրակացություններ:

Ստացված հիմնական արդյունքները: Ժամանակակից տնտեսական պայմաններում աշխատաշուկան տարասեռ է և բաղկացած է բազմաթիվ ոլորտներից, հատվածներից, առկա է ինտեգրված մոտեցման օբյեկտիվ անհրաժեշտություն, տարածաշրջանային աշխատաշուկան բաց դինամիկ սոցիալ-տնտեսական համակարգ է, աշխատաշուկայի գործունեությունը պետք է գնահատվի բազմաթիվ չափանիշներով: Աշխատաշուկայի հետ կապված գրականության և աշխատանքի շուկայի ՀՀ վիճակագրական ժողովածուի հրապարակած տվյալների վերլուծությունը և աշխատաշուկայի հետ կապված ուսումնասիրությունները հնարավորություն ընձեռեցին ձևավորել ներկայացնել ՀՀ աշխատաշուկայի տեղաշարժերը և միտումները: Կատարված վերլուծության արդյունքները կարող են նպաստել պետության կողմից մշակվող սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակմանը:

Հոդվածի գիտական նորույթ: Գիտական աղբյուրների և վերլուծության արդյունքների հիման վրա ներկայացվել է ՀՀ աշխատաշուկայի միտումները և առանձնահատկությունները:

Բանալի բառեր. աշխատաշուկան, աշխատանքային ռեսուրս, աշխատունակ տարիք, աշխատուժ, աշխատուժի մասնակցության մակարդակ

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ РАСПРЕДЕЛЕНИЯ И ТЕНДЕНЦИЙ НА РЫНКЕ ТРУДА РА (В 2011-2021)

Григор Татулович Манукян

Аннотация. Актуальность статьи. Рынок труда является одним из важнейших элементов рыночной экономики. В современных условиях углубление несоответствия между предложением рынка труда и резервным предложением требует изучения и анализа основных показателей рынка труда.

Анализ тенденций рынка труда обеспечивает прочную основу для оценки и решения ключевых вопросов, связанных с эффективной занятостью и достойным трудом. Это определяет актуальность исследования.

Цель исследования – осветить тенденции рынка труда РА и представить его особенности. Для достижения этой цели были определены следующие проблемы: изучить динамику постоянного населения, живорождения и смертности, продолжительность жизни, проанализировать состав и структуру трудовых ресурсов, представить характеристики рабочей силы и экономически неактивного населения.

Методология. Основой представленного исследования послужили труды, статьи, материалы конференций, статистические сборники, изданные отечественными и зарубежными экономистами. В ходе исследования использовались аналитические методы сбора, сравнения, абстракции и обобщения данных, что позволило выявить сдвиги на рынке труда и сделать соответствующие выводы.

Получены основные результаты. В современных экономических условиях рынок труда неоднороден и состоит из множества сфер, секторов. Существует объективная необходимость комплексного подхода, региональный рынок труда представляет собой открытую динамичную социально-экономическую систему, деятельность рынка труда должна оцениваться по многим критериям. Анализ литературы, посвященной рынку труда, и общедоступных данных статистического сборника рынка труда РА, а также исследований, связанных с рынком труда, предоставил возможность представить движения и тенденции на рынке труда РА. Результаты анализа могут способствовать разработке социально-экономических программ, разрабатываемых государством.

Научная новизна. На основе научных источников и результатов анализа представлены тенденции и особенности рынка труда РА.

Ключевые слова: рынок труда, трудовые ресурсы, трудоспособный возраст, рабочая сила, уровень экономической активности

THE STATISTICAL ANALYSIS OF MOVEMENTS, AND TRENDS IN THE RA LABOR MARKET (IN 2011-2021)

Grigor Tatul Manukyan

Abstract. Relevance of the article. The labor market is one of the most important elements of the market economy. In the current conditions, the deepening of the discrepancy between the labor market supply and demand requires the study and analysis of the main indicators of the labor market.

Analyses of labor market trends provide a solid base for assessing and addressing key issues related to effective employment. This fact determines the relevance of the study.

The purpose of the study is to highlight the trends of the RA labor market and present its features. To achieve that goal, the following tasks were set: to study the dynamics of the permanent population and life expectancy, to analyze the composition and structure of labor resources, present the characteristics of the workforce and the economically inactive population.

Methodology. The basis for the presented research were the works, articles, conference papers, and statistical publications of domestic and foreign economists. Analytical methods of data collection, comparison, abstraction, and generalization were used in the scope of the article, which allowed us to identify the shifts in the labor market and to make corresponding conclusions.

The main results. In modern economic conditions, the labor market is heterogeneous and consists of many sectors, there is an objective need for an integrated approach, the regional labor market is an open dynamic socio-economic system, and the activity of the labor market must be evaluated by many criteria. The analysis of literature and statistical data related to the labor market of the RA labor market provided an opportunity to present the movements and trends of the RA labor market. The results of the analysis can contribute to the development of socio-economic programs developed by the state.

Scientific Novelty. Based on the results of carried out studies, the trends and features of the RA labor market were presented.

Keywords: labor market, labor resource, working age, workforce, workforce participation rate